47ՐԴ ՏԱՐԻ   ԹԻՒ 2542   ԵՐԿՈՒՇԱԲԹԻ   1912 ՅՈՒՆԻՍ 5-18

JOURNAL ARMÉNIEN
MANZOUMÉ-I EFKIAR
54 Grand' Rue de ... Porte 54
Constantinople

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԷՐԵԱՆ
ՈՐՈՒ ԿՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. ՊՈԼԻՍ, ԲԱԲԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 54
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ
ՒՏ ՉԵՆ ՏՐՈՒԻՐ

# Մանզումէի Էֆքեար

ԱԶԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՕՐԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

منظومهٔ افكار ارمنيجه يومى غزته
صاحب امتياز اوحانس فريد
اداره‌خانه‌سى باب عالى جاده‌سنده نومرو ٥٤

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| ԿԱՆԽԻԿ | ՏԱՐԿ. | ՎԵՑԱՄ. | ԵՌԱՄՍ. |
|---|---|---|---|
| Պոլսոյ համար | 80 Ղչ. | 45 | 25 Ղչ. |
| Գաւառներու համար | 80 » | 45 | 25 » |
| Արտասահմանի » | 25 Ֆր. | 14 | 8 Ֆր. |

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար տողը 5 ղրշ., Մէկէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ։

10 ՓԱՐԱ   ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ, ԲԱՑԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻԷՆ   10 ՓԱՐԱ

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԸ ԵՐԿՈՒՆՔԸ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՒԼԻՄԲԻԱԿԱՆԸ

### ԴՆԴԵՐԻՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Գատըգիւղի Իւնիօն Քլիւպին ընդարձակ հարթավայրին մէջ այս Կիրակի տեղի ունեցաւ Հայկական երկրորդ Ոլիմպիականը, մասնակցութեամբ Պոլսոյ «Սպորթ»ի ակումբներէն Տորքի, Արտաւազդի, Արաքսի, Նոր-Վէյի, Տիտանի, Անդրանիկի և Պարտիզակի Խանդավառի Վահագնի և ամսաթէօսներու։ Սկիւտարի Րաֆֆի ակումբը չէր մասնակցած, և իր բացակայութիւնը շատ աչքի կը զարնէր, ինչ որ անդրանիկ «Սպորթ»ի մարմիններէն եղած է Հայոց մէջ։ Կ'երևայ թիւրիմացութիւն մը յայտնուած է իրեն և միւսներուն միջև և առաջ բերեր է պառակտում մը որ քանի՛ շատ հարթուի, այնքան լաւ. ներգործութիւն պիտի ընէ «Սպորթ»ով հետաքրքրուող շրջանակներու մէջ։ Ձեռնարկ մը որուն ամեն նպատակը «ոյժ»ի զօրացումն է, առանց «միութեան» երբեք չի կրնար հասնիլ իր նպատակին, այնքա՛ն իրաւ է որ իրօք Միութիւնն է Ոյժը։

Կիրակիի հանդէսը սարքուած էր «Մարմնամարզ» թերթին խմբագրութեան կողմէ։ Անա քանի տարեն է այդ թերթը շատ փրկարար դեր մը կը խաղայ մեր մէջ, շնորհիւ իր անօրէնին՝ Գ. Շաւարշ Քրիսեանի, որ մինակը կրցաւ անազին խանդավառութիւն առաջ բերել այն տեսակ ձեռնարկի մը շուրջ որուն Հայերը միանգամ ընդ միշտ երես դարձուցած էին։ Մարմնամարզը մեր դպրոցներուն մէջ անգամ այնչափ եղած կարևորութիւնը չէր ստացած, ո՛ր մնաց դպրոցէն դուրս։ Հիմայ ամէն կողմ երիտասարդութիւնը մարմնի մարզանքներու և առհասարակ «սպորթ»ի զանազան ճիւղերուն անձնատուր եղած է հոյակապ ու սրտապնդիչ խանդավառութեամբ մը՝ արկէ բարիք, միայն բարիք կրնայ ծնիլ մեր ցեղին համար։ Մարմնամարզի և «սպորթ»ի ակումբները հետզհետէ կը շատնան Պոլսոյ մէջ, գինետան ու սրճարանի կեանքը տեղը կը լքուի, կը սկսի նոր կեանք մը՝ արձակ դաշտերու վրայ, ուժի, ճարպիկութեան, տոկունութեան, մարզանքի մրցումներով։ Նոր սերունդ մըն է որ կը

...մար իւրաքանչիւր ճիւղի ամէնէն կարողները, չորս կամ հինգ հոգի առ առաւելն, որպէս զի անոնք միայն մասնակցին վերջնական մրցման։ Այդ կերպով կարելի կ'ըլլայ ներդաշնակութիւն մը գոյացնել մրցակիցներու միջև, որով մրցումը աւելի առաջ, աւելի յանկուցիչ կը դառնայ, և պարզ վարժութեան մը տպաւորութիւնը չի թողուր, ինչպէս կիրակի եղաւ մէկ քանի անգամ։

Հանդէսը սկսաւ «Տիտան» և «Վահագն» ակումբները, շուէտական մարմնամարզի փորձերով, առաջնորդութեամբ Տեարք Գ. Մերճանօֆի, և ջերմապէս ծափահարուեցան, ինչպէս այլ ծափահարուեցին վերջին ալ՝ զաւազաններով շուէտական մարմնամարզի շարժումները և բուրգեր կազմելու փորձերուն մէջ։ Ցետոյ տեղի ունեցան մրցումները։

Անուասիկ շահողները, որոնցմէ իւրաքանչիւրը միտալով վարձատրուեցաւ իր սարքած յաղթանակին կարևորութեան համեմատ։

Մեծերու 100 եարտա վազքին մէջ առաջին հանդիսացաւ Յակոբ Պալթաեան, 11 երկու հինգերորդ երկվայրկեանէն, անցնելով Ս. Մկրեանի րէքօրը որ 11 չորս հինգերորդ երկվայրկեան էր։ Բ. հանդիսացաւ Պօղոս Նաւիպեան և Գ.՝ Մարտիրոս Գըլթեան։

Փոքրերու 100 եարտա վազքին մէջ Ա. հանդիսացաւ Աւետիս Եազուպեան, 13 երկվայրկեանէն, անցնելով Զարեհ Պէշիրեանի րէքօրը (13 երեք հինգերորդ երկվրկն.)։ Բ. հանդիսացաւ Գրիգոր Ծօլըեան և Գ.՝ Հրանտ Մկրտիչեան։

Երկայնութեամբ ցատքելու (կեցած) մէջ առաջին հանդիսացաւ Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան (10 ոտք 2 ուկես ինչզ)։ Բ. հանդիսացաւ Եղիշէ Փափազեան եւ Գ.՝ Մ. Զարիֆեան։

Ցօղով ցատքելու դժուարին փորձին մէջ Մ. Գույումճեան մրցակից չունեցաւ իր դէմ, և խանդավառ ծափերու մէջ անցաւ իր սեփական րէքօրը (8 ոտք 9 ուկես ինչզ) 10 ոտք 1 ուկես ինչզ բարձրու-

